

ՎԻՓՏՈՐ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆ, ԱՏՐՊԷՑԾԱՆԻ ՇԷՅԽԻԼԻՍԼԱՄԸ, ՍՈՒՄԿԱՅԻԹԸ ԵՒ ... ԿԱՐՍԸ

Կիւնայտընի մէջ Այտան Չէնթիւրք Ուրբաթ, 8 Սեպտեմբերի թիւով եզրակացութեան կը բերէ «Նոացող Կովկասը - Դիմադրող Ատրպէյճանը» խորագրեալ իր յօդուածաշարքը: Վերջին բաժնին մեծադիր խորագիրն է Վիկտոր Համբարձումեանի կողմէ Խորհրդային Միութեան Խորհրդարանին մէջ արտասանուած խօսքը. «Հայերը Կարսը կը պահանջեն»:

Յօդուածին վերջին մասին մէջ է որ կը խօսուի այս հարցին մասին:

«Ամբողջ Կովկասի իսլամներուն Շէյխիլիսլամն է Ալլահշիւքիւր Փաշազատէն, որ 41 տարեկանին այս պարտականութիւնը ստանձնելով մրցանիշ մը կոտրած է: Ան միեւնոյն ժամանակ Ատրպէյճանի Խորհրդարանի երեսփոխան մըն է: Խորհրդային Միութեան Խորհրդարանի երեք կրօնաւոր երեսփոխաններէն մէկն է ան: Միւս երկուքն են Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ը եւ Իւզպէքիստանի Միւֆթիւն:

Շէյխիլիսլամը իր խօսքերուն կը սկսի ըսելով որ «Խորհրդային Միութեան Խորհրդարանին մէջ հայերու հետ մետ գործը դժուար է»: Եւ յետոյ կուտայ տեղեկութիւն մը որ մինչեւ այսօր տեղ չէ գտած Թուրք

մամուլի մէջ:

«Կը կարծեմ որ 19 Յուլիսին էր: Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Նախագահ եւ Երեսփոխան Համբարձումեան (Վիկտոր) Խորհրդարանի ամպիոնը բարձրացաւ: Սկսաւ խօսիլ Լեռնային Ղարաբաղի մէջ տիրող ճգնաժամ վիճակին մասին: Պնդեց թէ մենք Սոււկայիթի մէջ հայերը ջարդած ենք եւ ըսաւ որ ասիկա երկրորդ ցեղասպանութիւնն էր Հայոց հեմ: Հոնկէ մեկնելով, Թուրքիոյ վրայ յարձակեցաւ 1915ի դեպքերու կապակցութեամբ: Վերջն ալ, աւելի վերի ամպիոնին առջեւ գիւմր մտիկ ընող Կորպաչոփին աչքերուն մէջ ուղիղ նայելով ըսաւ. «Արդէն Կարս նահանգը, որ Թուրքիոյ սահմաններուն մէջ մնացած է, Հայկական հող է: Պէտք է որ ետ առնուի այդ նահանգը»: Մենք, Թրքական ծագումով երեսփոխաններս, ստոնցանք այդ խօսքերը լսելով: Կորպաչով նայեցաւ առանց արտայայտութիւն մը ունենալու եւ ձայն չհանեց: Նոյն օրը Հայերը Խորհրդարան յղեցին բանաձեւ մը, որով կը պահանջուէր 1915ի «ցեղասպանութեան» պախարակումը»:

- Լաւ, Թուրք երեսփոխանները հակազդեցութիւն ցոյց չտուին, բանաձեւը Խորհրդարանին կողմէ պիտի ընդունուի:

«Լաւ պէտք է գիտնանք թէ Խորհրդային Խորհրդարանը ինչպէս կը բանի: Ամպիոնը տակաւին օգտագործելի չէ փոխադարձ վեճերու, իրարու պատասխան տալու ուղղութեամբ: Երեսփոխանները այդտեղ միայն իրենց ազգային հարցերուն մասին տեղեկութիւն տալով կը գոհանան: Գալով բանաձեւին: Կրնայ ընդունուիլ: Որովհետեւ Խորհրդարանին մէջ Թրքական ծագումով երեսփոխանները միայն հարիւրին 15ը կը կազմեն»:

Շէյխիլիսլամ Ալլահշիւքիւր Փաշազատէի այս յայտարարութիւնը կրնայ շարժման անցընել Թուրքիան, որ արդէն տարիներէ ի վեր Ամերիկեան Գոնկրէսի մօտ Հայկական լոպիին դէմ պայքար կը մղէ:

Կ'ուզեմ յօդուածաշարքս աւարտել Շէյխիլիսլամին վերի բացատրութիւններով, որոնք արդէն կուզան փաստել թէ Կովկասի տազնապը միայն սահմաններուն ետին մնալու բնոյթ չունի»: